

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԳՐԻԳՈՐ ՇՆՔԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հայ եկեղեցու և առհասարակ մեր ժողովրդի պատմության մի գեղեցիկ ու ազնիվ դրվագներից է Երուսաղեմի հայոց Գրիգոր Շնթայակիր պատրիարքի (1715-1749) երկաթե շնթաների պատմությունը:

Համառոտ հիշեցնենք. Գրիգոր Շիրվանցի պատրիարքը 1718 թվականին իր պարանոցին է անցկացրել խաչակիր երկաթե շնթա ուխտելով այն չհանել այնքան ժամանակ, քանի դեռ իսպառ չեն մարվել Ս. Հակոբյանց միաբանության և վանքի կուտակված մեծաքանակ պարտքերը: Երկաթե շնթան ու խաչերը, այսպիսով, հանդես են գալիս որպես Երուսաղեմի հայոց վանքի պարտքերի վճարման լուծը ստանձնելու խորհրդանիշ: Դրանից էլ առաջացել է Շնթայակիր մականունը:

Գրիգոր Շնթայակիրի անձնվեր այդ քայլը լայն արձագանք է ստացել ժամանակի հայ մատենագրության մեջ: Բերենք միայն Երուսաղեմի ձեռագրատան 1950 թվահամար Ավետարանի հիշատակարանից մի հատված. «Որոյ վասն զինքն ի գերութիւն ետ յօժար կամօք, և զշխթայագործ երկաթն ի պարանոցի էառ ներ թուարբերութեան տունարիս ՌԵԿԷ, ոչ սակս այլոյ իմիք, այլ միայն առ ի պարտուցս գոհակացս դիգեցմանց հինգ հարիւրից քսակացն թեթելութեանց, զօտի ի վերայ գօտուոյ կապելով էած զինքն ի քաղաք է քաղաք, յորոց Աստուծով ոչ սակաւ արդիւնաւորութեամբ և ոչ սակաւ զարդուք ևս յիշատակօք հանդերձ էհաս ի Սուրբ Գահս աստուածեան, յորում տիրապետական կառավարութեամբ զետեղեալսն և զեկեալսն ի տարուստ կառավարէ զամենեսին ընդ քաղցր բարութեամբ»¹:

Պատրիարքի այդ քայլի շնորհիվ բազմապատկվում են Երուսաղեմին ի նպաստ կատարվող նվիրատվությունները, որոնց խելամիտ ծախսումների շնորհիվ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը թեթևանում է իր հին պարտքերի լծից: Սակայն Գրիգոր պատրիարքը չի շտապում պարանոցն ազատել երկաթե շնթաներից՝ ընդհուպ 1728 թվականը:

Հենց այս թվականին է լույս աշխարհ գալիս ներկայացվող նամակը: Կ.Պոլսում գտնվող Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսի (1726-1729), Կ.Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու (1715-1741), Երուսաղեմի պատրիարքի ներկայացուցիչ Հովհաննես եպս. Հաննայի, հայազգի աշխարհիկ ու հոգևորական բազմաթիվ երևելիների («քահանայք, իշխանք, գանձակալք, եկեղեցականք և աշխարհականք», «աստ գտեալ ի հանդերձ միաբան ժողովուրդքս») մասնակցությամբ կազմվում է մի նամակ

¹ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր արք. Պողոսյան, հ. 2, Երուսաղեմ, 1972, էջ 515:

ուղղված Գրիգոր Շղթայակրին, որում բոլորը միահամուռ խնդրում են պարանոցից հանել ծանր լուծը:

Ի՞նչ էր նամակի բուն նպատակակետը. հեղինակները թախանձագին խնդրանքով դիմում են Շղթայակրին ի վերջո պարանոցից հանել երկաթյա շղթան, քանզի Ս.Աթռը մեծ չափով ազատվել էր նախկին պարտքերից: «Թեև նեղությունը դու ես քաշում, սակայն նախատինքն էլ մենք ենք կրում», - գրում են հեղինակները: Ու քանի որ իր խստամբեր ճգնության հետևանքով աստիճանաբար տկարանում էր պատրիարքի առողջությունը, այդ պատճառով նույն գրության մեջ հորդորում են ճաշի ժամանակ ջրախառն գինի ըմպել՝ ըստ առաքելական պատվիրանի, և մարմնին հանգիստ տալ:

Գրիգոր Շղթայակրին գործնական աջակցություն ցույց տալու համար նամակի հետ մեկտեղ հանգանակվում և Երուսաղեմ է առաքվում նաև հինգ հազար դահեկան գումար, որից հազար դահեկանը նվիրում է կաթողիկոսը: Դրանք բազմակնիք կոնդակով Երուսաղեմ է ուղարկվում Յովհաննես Յաննայի միջոցով, որին Շղթայակիրը Թովմաս ու Յակոբ վարդապետների հետ ուղարկել էր Կ.Պոլիս՝ կաթողիկոսից եպիսկոպոսական աստիճան ընդունելու նպատակով:

Հայտնի չէ, թե ինչպիսին է եղել Գրիգոր Շղթայակրի առաջին արձագանքը Կ.Պոլսի հայերի նամակին: Նման գրություններ դեռևս չեն հրատարակվել են Գր. Շղթայակիր պատրիարքի նամակները, որոնցից շատերը հասցեագրված են իր հոգեկից անձին Կ.Պոլսի պատրիարք Յովհաննես Կոլոտին: Այդ նամակների գրեթե յուրաքանչյուր արտահայտությունից նկատվում է իր պատրիարքական աթոռի հանդեպ մեծ նվիրում ու միաժամանակ անհանգստություն ու պատասխանատվության սրված զգացողություն ունեցող մի մարդու էությունը, ինչպիսին որ էր Շղթայակիրն իր պաշտոնավարման ողջ ընթացքում: 1724 թվականին, օրինակ, Երուսաղեմում քրիստոնյա համայնքների հանդեպ ծագած մի անախորժության մասին Գր. Շղթայակիրը Յովհաննես պատրիարքին գրում է այսպիսի տողերով «աչա՛ցս լոյս, թէ հնար է բան մի արա, զի հաշտիցին ընդ միմեանս, և զխաղաղութիւն առնիցեն, զի ասի՞ թէ մեր Հայոց ազգին միայն ԻԵ քիսա պարտք կայ, և մերդ չի գիտեր, թէ զի՞նչ արասցէ, թէ թողուցու՝ ահա ամենքն կորեան»²: Սակայն Շղթայակրի նամականիում 1728 թ. Կ.Պոլսի հայերի նամակի պատասխանը չկա: Հավանական է, որ Շղթայակիրը գերադասել է ոչ թե գրավոր, այլ գործնական արձագանք տալ նամակի պատգամներին:

Այդ իսկ պատճառով նամակին հաջորդող իրադարձությունների նկարագրությունը շարունակենք՝ հետևելով հայ Երուսաղեմի պատմության հեղինակ Տիգրան Սավալանյանցին: Վերջինս, անշուշտ, հենվել է վավերագրերի վրա, նույնիսկ մեկ-երկու մեջբերում է կատարել Կ.Պոլսի հայերի նամակից, ինչը ցույց է տալիս, որ նրան հայտնի է եղել նամակի բնագիրը:

² «Սիոն», 1971, ք. 9-10, էջ 358:

«Երանաշնորհ պատրիարքը,- գրում է Տ. Սավալանյանցը,- չի համար-
ծակիր այլևս դեմ կենալ այդ աղերսանքին, սիրտը կը շարժի, լալով կը
համբուրէ շղթան ու կը հանէ վիզէն: Բայց ատով ասելի կը զօրանայ իր մէջ
Ս.Աթոռին հանդէպ զգացած անօրինակ սերը, զոր կը պահէ մինչև ցմահ ու
կը շարունակէ իր հայրական հոգածութիւնը՝ մինչև որ իսպառ կազատի
Ս.Աթոռը իր հին ու նոր պարտքերէն: Կը տեսնենք արդարև, որ յաջորդ
տարին (1728) տոկոսներով միասին կը վճարուի նոր պարտքերն ալ, ու
րոնց գումարը մէկ տարուան ընթացքին 27.764 դահեկանի կը հասնի: Գրի-
գոր Շղթայակիրի կենսագրութիւնը ընող Յիշատակարանը կը գրէ, թէ անի-
կա չէր բազմած տակաւին Տեառնեղբօր Աթոռին վրա: Շղթան վիզէն հանե-
լէն ետք է, որ երկու եպիսկոպոսներ թւերը մտնելով Առաքելական Աթոռին
վրայ կը բարձրացնեն, ու այդ օրը շատ մեծ ուրախութիւն կըլլայ միաբա-
նութեան մէջ»³:

* * *

Մի քանի նկատառում ժամանակի հայ հոգևոր և աշխարհիկ երևելի-
ներին ի մի հավաքած պատմական նամակի լեզվի մասին: Նամակն այս
ժանրի գլուխգործոցներից է բովանդակությամբ ու լեզվական առունով:
Նամակը, իբրև գրական ստեղծագործություն, մի պոռթկում է կարծես
տարիներ շարունակ կուտակված, քննարկված խնդրին ի վերջո լուծում
տալու համար: Այդ տրամադրությունը զգացվում է բազմաթիվ հատված-
ներում, ինչպես՝

«Բաւական լիցի տառապանդ և զմեզ տառապեցուցանելդ, ո՛ր գերա-
պատիւ: Շա՛տ լիցի քեզ տապիչդ և մեզ համբերելս»:

«Ձնեղութիւն դու կրես, բայց զնախատինսն մեք»:

«Դու նահատակ, մեք՝ սպանողք, խիստ լաւ, բարւոք վարձու արժան
առնես զաշխատողքս»:

«Թէ զաղաչանս զայս անտես առնիցես, ծանուցեալ լինիս, թէ ի զուր
սիրես զմեզ»:

Նամակի հեղինակը (կամ հեղինակները) կատարյալ տիրապատել է
մեր լեզվին ու մատենագրական ժառանգությանը: Որտեղ պետք է նամա-
կը գրված է կանոնավոր գրաբարով, որտեղ պետք է խոսակցական ու
սրտամոտ հատվածներով, որտեղ պետք է ներկայացված են հստակ ու
հատու փաստարկներ՝ անգամ երկաթյա կամք ունեցող Գրիգոր պատրար-
քին դիմելու և համոզել կարողանալու համար: Եվ վստահ կարելի է ասել,
որ նամակը հասել է իր նպատակին, այնքան որ ունի ներգործող ուժ, ունի
համոզող և անժխտելի կուռ տրամաբանություն:

Նամակն օժտված է գեղարվեստական մեծ արժեքով: Այստեղ կարելի
է հանդիպել բառակրկնությունների միջոցով ստեղծված պատկերների,

³ **Տիգրան Սաւալանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, հ. 2, գրաբար բնագրից
աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս. Նշանեան, Երուսաղէմ, 1931, էջ 698:

Տիգրան Սավալանյանցը (1821-1901 թթ.) եղել է Երուսաղեմի ժառանգավորաց
վարժարանի ուսուցիչ, տպարանի տեսուչ, 1850 թ. նաև՝ պատրիարքարանի քարտու-
ղար: Նրա մասին մանրամասն տես՝ **Տիգրան Բ. Թ. Սաւալանեանց**, Կենսագրական
յուշեր, Գահիրէ, 1900:

ինչպես «մի և մի՝ բնաւ լիցի հոգ հոգարկու հոգւոյդ», «աղաչենք, աղաչենք և բիւրիցս աղաչենք», «գի գիտեն, որ գիտենն»:

Զգալի թիվ են կազմում նորակազմ բառերը, որոնք ցույց են տալիս հեղինակի լեզվական հմտությունը՝ **լուսաւորչածին** երանք, յօգնութիւն **առժամանել**, գիր մատանց քոց **անբացիկ**, **շնորհաշար** բան, **լուսասահման փրկութեանագործ** վայրացդ, հոգեկիցն քո **նոյնավիշտ**, ո՛վ **գերամեծար**, տեսիլ **երկնահոտ** և այլն:

Նամակի լեզուն գրաբարն է, որոշ՝ ոչ առատ աշխարհաբարյան արտահայտություններով, ինչպես «նաւն...պահուցն երկուշաբթին կելանէ», «զվնասն չի վճարեր», «ահա ես քսակէս հազար դուրուշ իմտատիէ տամ», «հերիք նախատակո՞ծ եղաք»:

Գործածված են մի քանի փոխառյալ բառեր, որոնք ժամանակին համագործածական կարող էին լինել՝ **իմտատիէ**, **տէրէ**, **մութլախ**, **վէթիլ**, **դայրէթ**:

Երկու խոսք՝ նամակի հնարավոր հեղինակի մասին: Պետք է ասել, որ նման տեքստ գրողն իր դիրքով Գրիգոր Շղթայակրից պակաս մեկը չէր կարող լինել: Խիստ հակված ենք տեսնելու Յովհաննես Կոլոտ պատրիարքի եթե ոչ անմիջական ձեռագիրը, ապա առնվազն ակտիվ միջամտությունը նամակը գրելիս: Այդ նա՛ է, որ գործունեությամբ քաջածանոթ էր Երուսաղեմի իրավիճակին և ողջ էությամբ կապված եղբայրակից ու աթոռակից Գրիգոր պատրիարքին: Անմիջականորեն Յովհ. Կոլոտին է առնչվում այն հնարավոր ամոթանքը, որ կրում էին հայերը իրենց պատրիարքին շղթայակապ պահելու (թեկուզ ինքնական) և ազատել չկարողանալու համար: Կարապետ Ունեցի կաթողիկոսի Կ.Պոլսում լինելու պարագան էլ, անշուշտ, նոր ու լրացուցիչ ազդակ է դարձել պատրիարքի «շղթաների» հարցն ի վերջո լուծելու համար:

* * *

Գրիգոր Շղթայակրին հասցեագրած Կ.Պոլսի հայերի նամակի պատճենը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 9142 ձեռագրում: Այն հաստ կազմով մեծ տետր է, որ ամփոփում է «Ճանապարհորդութիւն Ստեփանոսի Զ. Սուրենեանց ի Տաճկաստան և ստորագրութիւն Երուսաղեմի» երկը: Ինչպես ձեռագրի տիտղոսաթերթն է վկայում, ուղեգրական այս երկը գրվել է 1864 թվականին, հեղինակի՝ Ստեփանոս Սուրենեանց եպիսկոպոսի ձեռքով⁴:

Այս ձեռագիր տետրի վերջում 103-րդ թերթից հետո կարված են հիմնական տետրի էջերից ավելի փոքր թղթեր՝ թվով 3-ը, որոնք կազմում են ձեռագրի 104-105-106-րդ թերթերը: Այդ էջերին էլ արտագրվել և պահ-

⁴ Ստեփանոս Սուրենյանցի երկի լեզվի մասին պատկերացում կազմելու համար ներկայացնում ենք մի հատված. «Սուրբ Թորոսի եկեղեցիէն վերադառնալուդ կ'գաս կրկին ուխտաւորաց թաղերուն մէջէն կանցնիս և կ'ելլես մինչև նորաշէն Չում թաղէն, և անոր քովէն ուղղակի դէպի ներքև արևելեան կողմը, դէմ յանդիման մեծ տան մը, և անկէց մտնալուդ կրկին...փոքրիկ դուռ մը, որ կ'մտցնէ քեզի Յրեշտակապետաց վանքը, որ է կից Սուրբ Յակոբեան վանքին, բայց՝ առանձին անուր և բարձր պարսպով» (ՄՄ, թ. 9142 ձեռագիր, էջ 70ա):

պանվել է 1728 թվականի նամակի պատճենը: Դժվար չէ ենթադրել (թեև այդ մասին ոչ մի ակնարկ չկա ձեռագրում), որ նամակն ընդօրինակվել է Երուսաղեմի գրապահոցներում պահվող բնագիր նամակից՝ Ստեփանոս Սուրենյանցի պատվերով:

Նամակի պատճենի առաջին էջի (104ա) վերին մասում արտագրված է Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսի հաստատագիրը. «Եմ Կարապետ կաթողիկոս համական և միաբան եմ օրհնեալ իշխանացս Հայոց»:

Այս հավաստագրին հաջորդում է խորագիրը, որ, անշուշտ, գրիչինն է, որին էլ հետևում է նամակի բուն շարադրանքը:

Ստորև ներկայացնում ենք 1728 թվականի պատմական նամակն ամբողջությամբ: Կետադրությունը կատարվել է մեր կողմից, որոշ անվանումների մեծատառերով գրությունը (սուրբ Աթոռ, Հայրապետ և այլն) պահպանել ենք, ինչպես բնագրում է: Ձեռագրում զեղչված տառերը, կրճատ գրությունները վերականգնել ենք:

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

* * *

«^{104ա/}Օրինակ և ճիշտ գաղափար նամակին՝ ութուն և չորս կնքով եկեալ ի Կոտանդնուպօլսոյ ի սուրբ Երուսաղէմ առ Գրիգոր Շղթայակիր Պատրիարք սրբոյ Աթոռոյս:

Ամենապայծառ և սքանչելագործ Սուրբ տեղեացոյ տնօրինականաց Տեառն մերոյ Քրիստոսի՝ որդւոյն Աստուծոյ. մոխրամած երեսօք յերկիր կցեալ պատկառանօք զերամաքուր քարանց և հողոյ, որ ի դմա կան սրբութեանցն, այսինքն՝ քահանայք, իշխանք, գանձակալք, եկեղեցականք և աշխարհականք և մանաւանդ աստ համահաւաք լուսաւորչածին երամք՝ հանդերձ հարբ մերով և որդեկաւ քով և հոգեւոր առաջնորդաւ Յօհաննէս Աստուածաբան վարդապետին: Որք և զշնորհագարոյ սուրբ Հայրապետ և գյոյժ բաղձալի հայրոյ մեր բազմավիշտ աջահամբոյր փափաքանօք ողջունելով զորպիսութիւն ցաւագնեալ ծնողիդ մերոյ, իբր ի նոյն շնչոյ հարցանեմք և զօրինութիւն զերամաքուր աղօթից քոյ մեզ յօգնութիւն առժամանել միշտ աղերսեմք և հայցեմք:

Ծանիցէ քոյին վսեմութեանդ, հայր Սուրբ, զի զիր աստուածամերձ մատանց քոց եհաս առ մեզ անբացիկ և ըստ հրամանի քոյին սրբութեանդ բացեալ ընթերցաք ի լուր ամենեցունցս և ծանեաք, զոր ի նմայն շնորհաշար բանսն: Եւ գրեալ էիր Հայրոյ մեր զլիաւոր օրէն զերեք բանս զայսոսիկ. մէկ՝ թէ իմտատիէ⁵ խնդրէ ի ձեռք Սուրբ տունս. երկու՝ թէ ելանեն և յայլ կողմունս գնամ Սուրբ տանս աղագաւ. և երեք՝ թէ զուխտաւորսն յորդորեսջիք. վասնորոյ զրեցաք ահա զոր բարութն վարկաք: Գիտէ Հայրոյ մեր, թէ արևելեան տանն⁶ աւերումն ամենայն կողմանց վիշտ և ցաւ տարածեաց, զի ոչ գոյ տեղի, յորում զերեաց խղճութիւն չիցէ երևեալ ազգս հայոց ի պատճառս այնց զերեացն, որպէս քաջայայտ է քոյին հայրութեանդ, զոր զը^{104բ/}րելն յերկարութիւն է: Ջի ի գոյ և ի լրոյ յականջս ամենեցուն հա-

⁵ Իմտատիէ - թուրք. նպաստ, օգնություն:

⁶ Նկատի ունի բուն Հայաստանը:

սեալ կայ. Տէր ինքն հոգասցէ Զօրդ մերոյ մաղթանօքն: Եւ սիրոյ այսպէս լի-
նելոյ ասա դու մեզ, Զայր, լինիցի՞ օգուտ ինչ Սրբոյ տանդ այսպիսի ժա-
մանակի ելանելն քո ի շրջագայումն, ո՛չ բնաւին, որպէս յայտ է ամենեցուն
իբր ստոյգ գիտացեալ իր: Թագերուք, ասէ, ընդ յարկաւ ձերով, զի ժամա-
նակ մի ևս մնալով այցելութեանն Աստուծոյ: Ձի թէ ելցես, կարծեմք և գի-
տեմք իսկ, ի շահէն զվնասն չի վճարեր: Բարերար է Աստուած ի վերայ
համբերողաց՝ ակնկալեալ ողորմութեամբ նորա՝ չունիմք արմատ բնաւին
յուսահատութեան: Ձի ո՛չ յաւիտեան մերժէ Տէր զժողովուրդ իւր, զոր յա-
ռաջն ծանեաւ: Վասնորոյ յայցելութեանն, յորում այց արասցէ Տէր և
թեթևացուցէ ի մէնջ, թերևս սակաւ ինչ կամ բնաւին ըստ իւր անքննելի
դատաստանին և գթոյն զնեղութիւն գերեացս, յայնժամ շունչ առեալ սա-
կաւ ինչ կամօք և կարողութեամբ նոյն ինքն Աստուծոյ հոգւով և մարմնով
տալոց ենք զիմտատիյէն ըստ մերս կարեաց և անդր իսկ: Ձի ըստ մեծու-
թեան Աստուծոյ և զբարերարիչն գիտեմք լինել:

Իսկ յորդորումն ուխտաւորաց մի՛ և մի՛ բնաւ լիցի հոգ հոգարկու
հոգւոյդ, զի ահա հայրս մեր և առաջնորդ հոգեկիցն քո և նոյնավիշտ միշտ
ի նոյն ջան և ի նոյն տքնութեան կայ իւրայնովն ամենեքեամբք և ո՛չ միայն
նա, այլ և ամենայն աստեայքս գիտէ Զայրդ մեր, որ ան ի բաց դնելի⁷ ու-
նիմք զհոգ Սրբոյ տանդ ի սրտէ, Աստուծով քարոզեմք ամենքս իւրաքան-
չիւր ըստ կարեաց: Եւ մանաւանդ իսկ սրբազան վեհս մեր նորապսակն⁸,
որ այժմ իսկ աստ է, յորդորէ միշտ զժողովուրդ իւր:

Եւ ահա յայսմ ամի Աստուծով առատ և ընչաւէտք և տրասէրք են ուխ-
տաւորքն, և գիր գնաց յամենայն կողմունս, թէ՛ շուտով պարտիք շարժիլ,
զի նաւն Աստուծով յԱստուածածնի պահուցն երկուշաբթին կելանէ, տէրէ
որ հոգայ և մեզ հոգալ տայ: Եւ զկնի այսր ամենայնի, ներել ժտելով մեծի
սիրոյ համարձակութեան համայն վերոյ գրեցեալ ծառայիցս քոց, յու՛շ առ-
նենք Զօրդ մերոյ՝ չասել մեծի մարգարէին յորդորական բանիւ, թէ՛ «քահա-
նայքդ խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի»⁹ ևն: Ո՞ արդեօք այժմ իմասցի
յոզնաթախիծ սգով վարանեալ սիրտն Սաղիմայ, եթէ ոչ սրբոյ վեհիդ
վշտակիր անձն: Առ որ ահա քահանայք և աշակերտք նորոյս կտակի աս-
տէն այժմ աստ գտեալ ի հանդերձ միաբան ժողովուրդքս՝ խօսին զսփո-
փանս, որ լի եղեր ^{105ա/} տառապանօք և տրտմութեամբ և յերկար տաժա-
նեցար ի կապանսդ և ասեմք՝ բաւական լիցի տառապանդ և զմեզ տառա-
պեցուցանելդ, ո՛ գերապատիւ: Շա՛տ լիցի թեզ տապիլդ և մեզ համբերելս:
Ժամ է այսուհետև հոգածու Զօրդ՝ մխիթարիլ և մխիթարել: Սփոփեսցի օրի-
նեալ սիրտդ Երուսաղէմի և սփոփեսցէ ջիլս և զոսկերս և զայլ մասունս նո-
րին, որպէս զի սրտիդ բերկրեցելոյ երեսք զուարթք երևեսցի¹⁰: Արդ՝ այն
որ զհովիւսն գուշակս արար իւրոյն խորհրդոյն և զաղքատ ձկնորսն քա-
րոզս կենաց, չէ անմարթ, թէ և այժմ շրթամբք անարգ յետնեցելոցս ասիցէ

⁷ Գրված է այդպէս:

⁸ Ակնարկում է Կարապետ Բ Ուլնեցուն, որ 1728-ի ամռանը գտնվել է Կ.Պոլսում:

⁹ **Եսայի**, Խ. 2 - «Քահանայքդ խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի եւ մխիթարեցէք
զդա, զի լի եղել տառապանօք»:

¹⁰ Բնագրում «երևեսցիք», ուղղում ենք ըստ իմաստի:

հոգևոր գործոյն մշակիդ, թէ որ ի կապանս կամ այս ես, ե՛լ, և որ կաս ի միջի տրտմութեան տան իմոյ, յայտնիցի՛ր ի լոյս մխիթարութեան: Ասիցէ թերևս քոյին սրբութիւնդ, թէ զի՞նչ ասէք, ո՞չ ապաքէն մինչ ի վճարիլ Սրբոյ տանս պարտուցն, առ յանձն չելանել ի կապոյ այսր երկաթոյս: Զիրաւի, ո՛վ գերամեծար, բայց երկուս ինչ ունիմք ասել. մի՛ զի գոր ինչ սրբոյ խորհէին ի բարութիւն, խորհրդակցութեամբ ծառայիցս քոց առնէիր, իսկ զայդ կապանացդ իրակութիւն առանց ուրուք գիտելոյ արարեր, զոր կարենք սիրով, թէ չէր պարտ այդպէս լինիլ, ուստի սակայն խորհեալ և կատարեալ էիր՝ թողաք զվեհոյ ի կամս, զի մի՛ դիմակ¹¹ ցուցցուք զմեզ կամաց քոց:

Բայց շատ ուրեմն լռեցաք, թէ ասես. «Ձեզ ի՞նչ՝ յոր լռէք չլռէք»: Ասեմք, **թէպէտ զնեղութիւն դու կրես, բայց զնախատինսն՝ մեք, որովհետև կոչեցեալ է անուն քո ի վերայ մեր**¹², վասնորոյ ունիմք իրաւունս խօսելոյ ի մասինս յայսմիկ. երկու՛ զի ի սկզբանէ անտի յանձ առնելոյ անձին սրբոյդ զայդ ի սուրբ տանդ, այսինքն թէ սպասուց ոմանց ազատութիւնքն և նորեկ ^{/105p/} յիշատակքն և մանաւանդ թէ շնորհալի շինուածոյն ծախքն, այսոքիկ ամենայնքն թէ պարտուց տուեալ լինէին, գիտէ Զայրութիւնդ, թէ ստուգապէս վճարեալ լինէին բովանդակքն: Զամարեա՛ ուրեմն, թէ վճարեցան հին պարտքն և լցան ուխտքն քո, և վերստին նոր եղեն պարտք մնացեալքդ սակս վերոյ գրեցեալ պայծառութեան Սրբոյ տանդ շինուածոյ: Որպէս ասա գոհութիւն ամենատեառն, յաւելունն և յաճունն է օր ըստ օրէ շքեղագարդ պայծառութիւն գովելի յարկիդ, շնորհիւ Տեառն: Եւ ո՞ գիտէ, ասես դարձեալ թերևս, ես մինչ զՍուրբ տունս ո՛չ տեսանիցեմ ազատեալ ի բնաւին պարտուցն, ոչ հանից գերկաթս, եթէ ո՛չ՝ մեռայց ի սմին: Բարուք է պարծանքդ ի մեր նախատինս, զի ցուցանի յայտնապէս, թէ քիչ պարծանս և մեզ մեծ նախատինս անջնջելի կամիս արձանագրել յազգաց յազգս, ասելով թէ՛ սոքա այնք են, որք զառաջնորդ մի ի ներ երկաթոյ թողեալ՝ նովին սպանին: Դու նահատակ, մեք՝ սպանողք, խիստ լաւ, բարուք վարձու արժան առնես զաշխատողքս: Բայց քա՛ւ լիցի մտածել կամ ասել քեզ զայդ Զօրդ խոհեմագունի: Վասնորոյ ասա ստորագրեցեալ ծառայքս ամենեքեան **մեծաւ աղերսիւ և յուսով իսկ խնդրեմք ի քոյին սրբութենդ՝ լսել նուաստիցս աղաչանաց և հանել զպարանոց պատուականիդ ի կապանացդ երկաթոյ:**

Ի սերն Աստուծոյ լինի, Զայր սուրբ, զսուրբ Ձեբեթեանս և զսուրբն Յակոբ բարեխօս առ քեզ ունիմք, արա հայցեմքս. **հերիք նախատակոծ եղաք այլոց:** Խնայեա՛ զազգին քո անուն, լուիցես մեզ և լուիցէ քեզ Տէր, և մեք՝ ծառայքս քո: Ձի լսողին լսել իրաւունք են, որպէս և միւսն, և մի՛ լիցի ընթեռնելով ձգիցիս ի վայր զայլ ինչ գրել կամելով պատճառս առ մեզ, մի՛ աշխատիցիս ունայն, անհնար է, որ պիտի այս մէկ խնդիրքս ի կատարումն գայ: Որպէս և մեք միշտ կամք և եմք ծառայքս պատրաստական քոյին հայրութեանդ և մանաւանդ տեղւոյդ առ ի կատարել, զոր ինչ հրամայիցես: Ուստի **աղաչեմք, աղաչեմք և բիրիցս աղաչեմք, զի մի՛ գուցէ և մեզ՝**

¹¹ Այստեղ՝ հակառակութիւն:

¹² Այս և հետագա ընդգծումները մերն են՝ Ն.Դ.:

Ժառայիցս լքումն ի ջերմաջերն առաջադիմութենես լինիցի, և ո՛չ ի մեծց պատճառեալ:

^{/106ա/} Վերջացուցանելով զբանս ասեմք, **անպատճառ լսելով մերս աղերսանաց պարտիս ի հարկաւորութենէ, որ առ մեզ սիրոյդ, հանել զկապանսդ իսկոյն ի հասանել աղերսանացս և ի վերայ կերակրոյ,** իբր պտուղ զմեզ և զսուրբ տունդ սիրելոյդ ըմպել սակաւ ինչ գինի ջրախառն ըստ պատուիրելոյ աստուածայնոյն Պօղոսի: **Եւ թէ զաղաչանս զայս անտես առնիցես, ծանուցեալ լինիս, թէ ի զուր սիրես զմեզ:** Այլ ուրիշ բանից և պատճառաց ո՛չ լսեմք, թէ և արդար իսկ իցէ: Եթէ իսկապէս զօգուտ Սրբոյ տանդ խոկայցես, տալ պարտիս սակաւ ինչ և բնութեանդ թոյլ. և ո՛չ յոյժ ճնշել ի վեր քան զհարկն, զգիւարդն դու իմա՛, որ յայտ իսկ է, և հեստելն վնաս անձինդ սրբոյ և տանդ սրբոյ, զոր ոչ խնդրէ տէր, ուստի և ո՛չ հաճի, ապա և դիմակ գտանի մութլախ¹³ կապակցութիւն, որ առ մեզ սիրոյդ զայս խնդիրս գիտեմք: Բայց արդ՝ մինչ յայսմ խորհրդի էաք և խոկայաք, լուաք թէ հոգեծինն հարազատ սրբոյ Զօրդ մերոյ վէքիլ¹⁴ Յովհաննես վարդապետն զալոց է ի մօտ աւուրս ընդ ուխտաւորացն: Եւ սակաւ ինչ զկնի ընկալաք տեսլեամք, զոր լւաքն ունկամք. այս է զսիրելին քո և զնեցուկն ծերութեանդ ըստ քոյին շնորհագարդ գրոյ: Յոր յայեցեալ մարմնոյ աչաց ըղձանօք լցաք բերկրանօք և անպատում խնդութեամք, իբր ստուգիւ զամենաբաղձալի տեսիլ սրբոյ Զօրդ իմն իսկ տեսանելով. վայելեցաք արդարև ի քաղցրածաղիկ ծառոյդ զբարետիպ պտուղն՝ յինքեան զԶօրդ սրբոյ ունելով զպայծառ վարուցն կերպարան: Որ և զօրհնութիւն ամենագեղեցիկ սուրբ վայրացդ և զաղօթիցն ձեր երանաշնորհ սուրբ Զայրապետիդ՝ հեղեալ ի վերայ մեր իբր զօրձանս յորդ գետոյ, զարթոյց անդրէն զկարօտ անձկութեան մերոյ առ տեսիլ երկնահոտ տեղեացդ, և գեղոյ դիմաց պատուեալ պատկերի գերամաքուր ծնողիդ:

Ապա յետ սակաւուց որպէս և զրեալ էր սուրբ Զայրդ մեր ամենայնիւ ըստ նոյն օրինակի, կամօք և հաւանութեամք սիրելի որդւոյ քոյ և Զօր մերոյ՝ դիտողի մեծի սրբազան Զայրապետիս մերոյ...¹⁵ ընկալաւ զպարկեշտ պատիւ եպիսկոպոսութեան ի վերոյ գրեցեալ պատուելի սուրբ Զօրէն մերմէ ^{/106բ/} ի սպասաւորութիւն սրբոյ գահիդ և մեծապայծառ Աթոռոյդ ամենայն Զայոց, հանդերձ երկու հարազատօքն իւրովի, այս է՝ Թովմաս և Յակոբ վարդապետօքն, որոց շնորհաւոր եղիցի սուրբ Զօրդ աղօթիւք, մատոյց մանաւանդ և սրբազան վեհիս մերոյ՝ զանպատմելի զանձն աստուածային, զվկայն կեցուցիչ մահուանն Յիսուսի, զսուրբ նշանն տիրական զընծայեցեալն ի սուրբ Զօրէդ, զոր ընկալեալ սուրբ Զայրապետիս մերոյ՝ ծանոյց մեզ ամենեցուն և աղաչեաց իսկ՝ թէ օգնիցէք սրբոյ տանն այնմիկ և ինքնակամ կապեալ հովուին նորին՝ սիրելի եղբօրս մերոյ. շա՛տ լիցի, ասէ, զոր ցաւեացն, եկայք մխիթար լիցուք մեծի տրտմութեան նորին: Եւ այսպիսի

¹³ Մութլախ – թուրք. անպատճառ:

¹⁴ Վէքիլ – թուրք. փոխանորդ, լիագոր, ներկայացուցիչ: «Յոգեծին հարազատ՝ վէքիլ Յովհաննես վարդապետն», անշուշտ, Յովհաննես Զաննա նորընծա եպիսկոպոսն է՝ «Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս» (Կ.Պոլիս, 1731) գրքի հեղինակը, որին նամակի հեղինակները հիշատակում են մի քանի առիթներով:

¹⁵ Արտագրողն այստեղ կետեր է դրել և ինչ-ինչ պատճառներով զեղջել կաթողիկոսի անունը:

բանիւք ծանուցումն առնելով ասաց. «Ահա ես քսակէս հազար դուրուշ իմ-տատիէ տամ սուրբ տանն դատաստանի և այսուհետև դայրէթն¹⁶ ձեր է»:

Վասնորոյ և մեր շարժեալ ի նախկին և ի սոյն փութոյ, և մանաւանդ ի ներշնչմանէ հոգւոյն Աստուծոյ, ընծայեցաք սակաւ ինչ արդիւնս յարդեանց մերոց ի թեթևութիւն պարտուց սրբոյ տաճարիդ Աստուծոյ և ի լուծումն կապանաց Զօրդ մերոյ յերկար տառապելոյ: Որ և ահա ձեռամբ հարազատի քոյ տեառն Յովհաննէս եպիսկոպոսի և հիի (°) Կարապետին հանդերձ միւս մահտեսուքն առաքեցաք ի սուրբ Աթոռդ իմտատիէ ընդամենն հինգ հազար դուրուշ: Եւ աղաչեմք յոյժ, զի մի՛ ի քանակն, այլ յորակն հայեսցիս, քանզի յայսմ ամի մէկ փողն որպէս թէ տասն է համարելի. զզիարդն լռեմք և յայտ է: Զի գիտեն, որ գիտենն, և պատմեն արդեօք սուրբ Զօրդ: **Եւ որ ինչ մնացուածք պարտուցն մնայցեն, զայն ևս ի մեր վերայ իմա՛, միայն թէ զայս Բ խնդիրս մեր կատարիցես, այս է՝ զհանել երկաթոյդ և զջուր և եթ ոչ ըմպել:**

Եւ որպէս ի վերոյ եդաք, նշան սիրոյ քո առ մեզ և առ սուրբ Զայրապետս մեր և առ բազմաջան որդեակ քո՝ զայս խնդիրս գիտեմք և ոչ զայլ ինչ: Եւ մնամք աւասիկ լրոյ կատարման: Եւ ողջ լեր բաւական բազմաց օգտութեան բարեշնորհ կեցութեամբ. ամէն:

Առ միահաղոյն պաշտօնեայսդ սուրբ և լուսասահման փրկութեանագործ վայրացդ, զսոյն աղերս բազմաւ կրկնելով հայցեմք, զի հարկ եղեալ ամենեքեանդ մեծապէս ժտմամբ խնդրեսցիք զսոյն խնդիրս մեր ի Զօրէն մերմէ: Մի՛ վերջասցիք և մի՛ յօրէ յօր ձգեսցիք: Այլ իսկոյն ի գալ գրոյս՝ ջանն ձեր մեծ այս լիցի, զի համօրէն զայս խնդրիցէք և ո՛չ դադարեսցիք մինչև կատարեսցէ զխնդիրսդ, և յուսամք ահա ի ձեզ՝ զայս հարկ սիրոյ կատարել, եթ սիրէք զԱստուած և զմեզ: Եւ ահա մանաւանդ նորապսակ¹⁷ ... ամենայն Զայոց սուրբ Զայրս մեր աստ գոլով, նա ևս մեծ հարկաւորութեամբ խնդրէ զայս՝ իցէ՞ արդեօք ընդդէմ կալ առաքելական հրամանին ևս: Եւ մնամք աւասիկ գրոյ և լրոյ՝ թէ եղև զոր խնդրեսցիքն: Եւ բաւ է:

ՌԵՂԷ, օգոստոսի ԺԶ»:

НОРАЙР ПОГОСЯН – Письмо армян Константинополя Иерусалимскому патриарху Григору Цепеносу. – В начале XVIII века за армянским патриаршеством Иерусалима образовались большие долги. Избранный в 1715 г. патриарх Григор Ширванци в 1718-м навесил на выю цепи, поклявшись не снимать их до тех пор, пока все долги не будут погашены полностью. За этим последовали крупные дарения, большая часть долгов была погашена, однако Григор не спешил снимать цепи. В 1728 г. видные армяне Константинополя обращаются к патриарху Григору с письмом, призывая его освободить себя от тяжкого бремени, а армянскую общину – от нареканий. Статья посвящена этому письму, ценному как исторический документ и как высокий образец жанра. Представлены обстоя-

¹⁶ Ղայրէթ – թուրք. ջանք, եռանդ, այստեղ՝ նախաձեռնություն:

¹⁷ Այստեղ նույնպէս գրիչը կետեր է դրել՝ զեղչելով կաթողիկոսի անունը:

тельства написания письма, охарактеризован его язык. Текст письма опубликован полностью по хранящейся в Матенадаране (Ереван) рукописи № 9142.

NORAYR POGHOSYAN – *The Letter of the Armenians of Constantinople to Grigor in Chains – the Patriarch of Jerusalem.* – At the beginning of the 18th century the Patriarchate compiled a lot of debts. In 1715 new Patriarch was elected Grigor Shirvantsi. Who put iron chain around his neck in 1718 and covenanted not to take it off until the debts were completely repaid. A lot of donations were made, main part of debts was repaid, but Grigor didn't hurry to take it off. In 1728 outstanding Armenians from Constantinople wrote a letter to the Patriarch and asked him to take the iron chain off his neck to free himself from the heavy burden and the Armenians from dispraise.

The present article is devoted to that historical letter, which is the masterpiece of the genre. First the writing circumstances of the letter are presented, then the language. The whole letter taken from Yerevan Repository of Manuscript, from script 9142, is also published.